ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Աստղիկ Խուրշուդյան

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/6
Էլ. հասցե՝ astghik@sci.am
ORCID: 0009-0005-8046-6998
Հոդվածը ներկայացվել է 18.01.2024, գրախոսվել է 18.01.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-142

Ամփոփում

Իրավական պետության կայացման հիմնախնդիրները իրավացիորեն կապված են սահմանադրական փոփոխությունների հետ, որոնք հստակորեն ամրագրված են իրավական պետության սոցիալական, տնտեսական և օրենսդրական հիմքերում, քանի որ այն սահմանադրական պետություն է, որում գերակայում են իրավունքը և սահմանադրական օրինականությունը, ինչպես նաև իրավական նորմի սահմանադրականացումը: Իրավական պետությունը օրենքի գերակայության վրա հիմնված ինքնիշխան քաղաքական կազմակերպություն է, որում երաշխավորված է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Բանալի բառեր՝ իրավական պետություն, իրավունքի գերակայություն, օրենքի գերակայություն, սոցիալ-իրավական պետություն, ժողովրդավարություն, սոցիալական պետություն, մարդու իրավունքներ:

Ներածություն

Սույն հոդվածում հանգամանորեն վերլուծության են ենթարկվել իրավական պետության հիմնական հատկանիշները, դրա կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, բացահայտվել է իրավական պետության տեսական հետազոտության գործնական-կիրառական նշանակությունը: Իրավական պետությունը «կենդանի օրգանիզմ» է հասարակության քաղաքական համակարգում, որով մեծապես պայմանավորված են հասարակության բնականոն և իրավական զարգացման հիմնական ուղենիշները:

Պատմահիրավական վերլուծություն

Վարչահիրամայական և բռնատիրական կարգերի կործանումից հետո իրականացված բարեփոխումների ընթացքում պետության և իրավունքի վերաբերյալ գիտական հայացքներում տեղի ունեցան արմատական փոփոխություններ և հստակորեն ընդգծվեցին հասարակության քաղաքական համակարգում դրանց դերի գնահատման նոր մոտեցումները: Ինչպես նշում է ակադեմիկոս Վ.Ս. Ներսեսյանցը. «Պետության՝ որպես իրավական-ազատական հասկացության համաձայն, ամեն մի պետություն իրավական պե-

տություն է այն իմաստով, որ յուրաքանչյուր պետություն (ի տարբերություն բռնատիրության, կառավարման բռնապետական տիպի և ձևի) ազատ (այսինքն՝ միաժամանակ իրավասուբյեկտ և պետական սուբյեկտ) անհատների հանրային-քաղաքական իշխանության իրավական կազմակերպություն է: Հենց դրա համար էլ յուրաքանչյուր պետություն (անկախ դրա տիպից և սոցիալ-պատմական զարգացման աստիճանից) մարդկանց ազատության արտահայտման, կեցության և իրականացման անհրաժեշտ ձև է»[1]:

Անցած երեսուն տարիների փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավական պետության պարտադիր ու հիմնական պայմաններ կարող են դիտվել.

- մարդու արժանապատվության ճանաչումը և հարգումը, նրա իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովումը, իրավունքի գերակայության երաշխավորումը իրավական կյանքում և իրավահարաբերությունների ոլորտում,
- իշխանությունների բաժանումը և հավասարակշռումը, քաղաքական, տնտեսական և վարչական ռեսուրսների օպտիմալ ապակենտրոնացումը,
- իշխանությունների պարբերաբար ընտրովի, վերահսկելի լինելը և հաշվետվությունը,
- անկախ և արդար դատական իշխանության մարմինների համակարգի առկայությունը,
- Սահմանադրության գերակայության և կայունության երաշխավորումը և դրա նորմերի անմիջական գործադրումը:

Իրավական ժողովրդավարական պետության հիմնական բնութագրիչներն են՝ անմիջական ժողովրդավարության երաշխավորումը, իրավական ներկայացուցչական ժողովրդավարությունը (ժողովրդի կողմից ընտրովի ինստիտուտների միջոցով իշխանության իրականացման օրինականությունը, վերահսկելիությունն ու հետադարձ կապի ապահովման իրական վիճակը), ժողովրդի կողմից իշխանության իրականացման անընդհատության երաշխավորվածությունը, ինչպես նաև մարդու (որպես սոցիալական արժեքի) և քաղաքացու (որպես տվյալ հասարակական համակարգի իրավասուբյեկտի) իրավունքների երաշխավորված պաշտպանվածությունը:

Ասվածից հետևում է, որ իրավական կարող է համարվել այն պետությունը, որտեղ հասարակությունը կառուցված է կամ կառուցվում է իրավական օրենքներով կարգավորված փոխհարաբերությունների վրա, որտեղ երաշխավորված են անհատի բնականոն ինքնաարտահայտման ու ինքնավարության շրջանակները և, առանց որևէ ընտրանքի, յուրաքանչյուր անհատ՝ որպես սոցիալական սուբյեկտ, հասարակական արժեք է, քանի որ մարդկանց, նրանց խմբերի և ողջ հասարակության պետականորեն ներ-

[1] Нерсесянц 2013, 310.

դաշնակված շահերն են ընկած հասարակական առաջընթացի հիմքում: Տվյալ հասարակության մեջ մարդու իրավունքներն ու ազատությունները ենթակա են սահմանափակման միայն այնտեղ ու այն չափով, որտեղ և որչափով դրանք անհրաժեշտ են այլոց իրավունքների ու ազատությունների երաշխավորման համար: Բացի դրանից, իրավական պետության հիմնական սկզբունքն էլ հենց մարդկանց սուբյեկտիվ իրավունքների ու դրանց իրացման օբյեկտիվ նախադրյալների ներդաշնակումն է՝ մարդկանց ազատությունների ու իշխանության սահմանների հստակեցումը:

Իրավական պետության բնորոշ գծերից է նաև այն, որ պետությունը պատասխանատու պետք է լինի պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների ու անգործության համար, պետք է ստեղծվի պատասխանատվության, նաև իրավունքների իրականացման վերահսկողության երաշխավորված համակարգ[2]:

Իրավական պետությունը ենթադրում է հասարակական հարաբերությունների որոշակի իրավական կարգավորվածություն և դրանց գործադրման համակարգերի հուսալի ու անխափան աշխատանք: Իրավունքի սուբյեկտներն այդ պարագայում կարող են լինել ազատ: Միայն օբյեկտիվ հասարակական հարաբերությունների ճանաչումը, իրավական կարգավորումը և դրանց իմացությունն է մարդուն ազատ գործելու հնարավորություն ու նախադրյալներ ընձեռում: Հետևաբար, իրավական պետության իմաստն ու բովանդակությունը՝ ինքնին մարդու բնական և անօտարելի իրավունքների պաշտոնական ճանաչումն է և դրանց երաշխավորված պաշտպանությունը, իշխանության իրավունքի միջոցով սահմանափակումը:

Իրավական պետությունում պետական միասնական իշխանությունն իրագործվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգի միջոցով, որում դատական իշխանությունը՝ որպես իրավապաշտպան և իրավապահպան ինստիտուտ, վերահսկողություն է իրականացնում իշխանության մյուս՝ օրենսդրական ու վարչական ճյուղերի գործունեության նկատմամբ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իրավական պետությունը իրավունքի գերակայության վրա հիմնված ինքնիշխան քաղաքական կազմակերպություն է, որտեղ երաշխավորված են մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը, քաղաքացիական հասարակության բնականոն գործառնությունը, իշխանությունների բաժանման և հավասարակշռության ապահովումը, ինչպես նաև իրականացվում է դատական ու հասարակական վերահսկողությունը՝ օրենքների պատշաճ կատարման համար:

Իրավական պետության գաղափարները փոխառնվեցին հետխորհրդային երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պետական շի-

[2] Алексеев 2006, 41-42.

նարարության ոլորտում և դարձան հասարակության արմատական վերափոխումների ամբողջ գործընթացի հիմնական կողմնորոշիչներից:

1995 թ. (հետագայում՝ 2005 և 2015 թթ. փոփոխություններով) Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեջ իրավաբանական-պաշտոնական ճանաչում ստացան ժամանակակից իրավական պետականության բոլոր երեք հիմնական բաղադրատարրերը (հարադրությունները, բնութագրերը և հատկությունները)՝ մարդասիրական-իրավականը (մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները), նորմատիվ-իրավականը (իրավական օրենքի տիրապետությունը) և ինստիտուցիոնալ-իրավականը (իշխանությունների բաժանման և փոխներգործության համակարգը):

ՀՀ սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն, «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Ինչպես նշում է, Վ. Նազարյանը, «Սահմանադրության հիման վրա իրավական պետությունը վերածվում է իրավունքի սուբյեկտի, այսինքն՝ որոշակի ու կոնկրետ իրավաբանական իրավունքներ և իրավաբանական պատասխանատվություններ կրողի: Իրավական պետության բոլոր իրավունքները նրան տրվում են ժողովրդի կողմից, ժողովրդի կամքն արտահայտող սահմանադրության միջոցով»[3]:

Ըստ Սահմանադրության, Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով (հոդվ. 2):

ՀՀ սահմանադրությունը (1-ին գլուխ) որպես սահմանադրական կարգի հիմքեր ամրագրում է հետխորհրդային Հայաստանի հասարակական և պետական-իրավական կառուցվածքի նորույթը սահմանող մի շարք սկզբունքային դրույթներ:

Իրավական պետականության հիմքերի ամրապնդման համար այստեղ վճռորոշ նշանակություն ունեն, առաջին հերթին, սահմանադրական դրույթները՝ մարդու իրավունքների ու ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքի, իշխանությունների բաժանման և հավասարակշռման, սահմանադրության գերակայության, դատական իշխանության անկախության և տեղական ինքնակառավարման մասին[4]:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքական համակարգի և քաղաքացիական հասարակության սահմանադրաիրավական հիմքերն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներում, որոնցում մասնավորապես նշված է՝ «Հայաստանի Հանրապետությունում

[3] Նազարյան 1992, 41:
[4] Соколов 1992, 368.

երաշխավորվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը» (8-րդ հոդված) և «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը» (10-րդ հոդված):

«Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը» (11-րդ հոդված), այսինքն՝ սահմանադրական կարգի գաղափարական և քաղաքական բնութագրերը իրենց մեջ ներառում են գաղափարական ու քաղաքական բազմակարծության, բազմակուսակցության, օրենքի առաջ հասարակական միավորումների հավասարության ճանաչումը սեփականության բոլոր ձևերի հավասարությունը և ազատ ձեռնարկատիրական գործունեությունը:

ՀՀ սահմանադրությունը հետխորհրդային կարգի հիմնական դրույթների իր կարգավորման մեջ հիմնվում է մարդու՝ ի ծնե և անօտարելի իրավունքների ու ազատությունների մասին բնական-իրավական գաղափարների վրա:

Սահմանադրությունը՝ որպես նոր սահմանադրական կարգի հիմքերից մեկը (3-րդ հոդված) հռչակում է. «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

Պետությունը՝ հանձին իր հանրային իշխանության, ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» (3-րդ հոդված):

ՀՀ սահմանադրությունը (2-րդ գլուխ) նախատեսում է արդի միջազգային չափանիշներին և այդ ոլորտում զարգացած ազատական-ժողովրդավարական երկրներում սահմանադրական պահանջների բարձր մակարդակին համապատասխանող մարդու և քաղաքացու անձնական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների լայն շրջանակ:

Սահմանադրությունում ամրագրված՝ մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու պարտականություններն իրենց հանրագումարում կազմում են անհատի սահմանադրական-իրավական կարգավիճակը: Մարդու իրավունքներ ու ազատություններ ասելով՝ Սահմանադրությունը, ինչ-

պես ՀՀ քաղաքացու, ըստ էության, նկատի ունի յուրաքանչյուր անհատի այնպես էլ, այլ պետության քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ ի ծնե ու անօտարելի իրավունքներն ու ազատությունները, այսինքն՝ օգտվելով ավանդական եզրաբանությունից՝ մարդու բնական իրավունքները:

Մարդու իրավունքների ու ազատությունների մասին սահմանադրական դրույթներում «մարդ» բառի հետ միասին, որպես դրա հոմանիշ, օգտագործվում են նաև «յուրաքանչյուրը», «բոլորը», «անձը», «ոչ ոք» (ընդհանուր ժխտական իմաստով) բառերը: Օրինակ, «բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև» (28-րդ հոդված), «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի» (24-րդ հոդված), «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք» (27-րդ հոդված) և այլն:

Անհատի իրավունքներն ընկնում են մարդու իրավունքների և քաղաքացու իրավունքների տարանջատման հիմքում, որն առաջին անգամ պաշտոնապես ամրագրվել է Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրում (1789 թ.), որն էլ իր հերթին, ընկած է քաղաքացիական հասարակության ու պետության տարբերակման հիմքում ու, համապատասխանաբար, անհատի՝ որպես քաղաքացիական հասարակության անդամի (մարդու իրավասուբյեկտիվության՝ որպես մասնավոր անձի), և որպես հանրային-քաղաքական հանրույթի, պետության անդամի (անհատի՝ որպես հանրային-քաղաքական իշխանության, որպես քաղաքացու իրավասուբյեկտության) իրավունքների տարբերակումը[5]:

Անհատի սահմանադրական-իրավական կարգավիճակը որոշակի համակարգ է, որը, որպես կառուցվածքային մասեր, ներառում է անհատի միասեռ (ըստ կարգավորման ոլորտի և առարկայի) իրավունքների հետևյալ խմբերը, անձնական (անհատական-մարդկային) իրավունքներ, քաղաքական իրավունքներ, տնտեսական իրավունքներ, սոցիալական իրավունքներ, մշակութային իրավունքներ[6]:

Հայաստանի Սահմանադրությանը ներհատուկ իրավահասկացողության հայեցակարգն ամբողջությամբ ներառում է նաև պետության իրավական հասկացողությունը և, համապատասխանաբար, պետական իշխանության իրավական կազմակերպումը: Ինստիտուցիոնալ-իրավական առումով դա արտահայտվում է հայկական-իրավական պետականության ընդհանուր հայեցակարգի շրջանակում իշխանությունների բաժանման որոշակի հայեցակարգի սահմանադրական ամրապնդման մեջ:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը Սահմանադրությունում (4-րդ հոդված) ձևակերպվել է հետևյալ կերպ. «Պետա-

[5] Алексеев 1999, 54-57.
[6] Витрук 2008, 86-87.

կան իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա»:

Իշխանությունների բաժանման այս ընդհանուր դրույթները հետագայում կոնկրետացել են Սահմանադրության համապատասխան գլուխներում, որոնք սահմանում են հանրապետության նախագահի (3-րդ գլուխ), Ազգային ժողովի (4-րդ գլուխ), կառավարության (6-րդ գլուխ), դատարանների և բարձրագույն դատական խորհրդի (7-րդ գլուխ) իրավասությունները:

Հայկական իրավական պետության սահմանադրական մոդելը գործնականում դեռևս լրիվ ծավալով չի իրականացվել[7]: Ուստի, առաջնահերթ խնդիր է (թե՛ օրինաստեղծ պրակտիկայի, թե՛ իրավաբանական տեսության համար) բոլոր սահմանադրական ինստիտուտների, կառույցների և ընթացակարգերի ձևավորման գործընթացն ավարտին հասցնելը, Սահմանադրությամբ նախատեսված բոլոր օրենքների ընդունումը, մի խոսքով, ազգային պետական իրավական համակարգի սահմանադրական մոդելը մինչև վերջ՝ ավարտին հասցնելը (դրա ստատիկայում և դինամիկայում):

Հայկական իրավական պետության սահմանադրական մոդելի կենսագործմանը զուգընթաց, պետք է պարբերաբար աշխատանք տանել (գործնական և գիտական-իրավաբանական) այդ մոդելի հետագա զարգացման ուղղությամբ:

Եզրակացություններ

Հայաստանի Հանրապետությունում իրավական պետության կայացման հիմնախնդիրների հանգամանալից քննությունը հնարավորություն է ընձեռում հանգելու մի շարք կարևոր եզրակացությունների, որոնք ունեն գործնական նշանակություն դատահիրավական և սահմանադրական փոփոխությունների համատեքստում: Հայ հասարակության և պետականության զարգացման ներկա փուլում խիստ կարևորվում են սոցիալ-իրավական պետության կայացման հիմնախնդիրները, որոնք, կարծում ենք, կարող են դառնալ իրավաքաղաքական հիմք՝ հայոց իրավական-ժողովրդավարական պետության հաջորդ փուլին անցնելու առումով:

Օգտագործված գրականություն

Ապիյան Ն.Ա., Պետրոսյան Ա.Հ. 2001, Իրավական պետություն և օրինականություն, Երևան, «Տիգրան Մեծ», 288 էջ:

Նազարյան Վ.Ռ. 1992, Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիա, Երևան, «Գոշ», 41 էջ:

Алексеев С.С. 1999, Право. Азбука. Теория. Философия. Опыт комплексного исследования, Москва, «Статут», 642 с.

[7] Ապիյան, Պետրոսյան 2001, 288:

Алексеев С.С. 2006, Линия права, Москва, «Статут», 461 с.
Витрук Н.Б. 2012, Общая теория правового статуса личности, Москва, «Норма», 448 с.
Нерсесянц В.С. 2015, Общая теория права и государства, Москва, «Норма», 548 с.
Соколов А.Н. 1992, Идея правового государства в Германии и механизм ее реализации: автореферат докт. дисс., Украинская юрид. акад., Харьков, 492 с.

ПРОБЛЕМЫ СТАНОВЛЕНИЯ ПРАВОВОГО ГОСУДАРСТВА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Астхик Хуршудян

Резюме

Проблемы становления правового государства по праву связаны с конституционными изменениями, которые четко зафиксированы в социальных, экономических и законодательных основах правового государства, поскольку правовое государство является конституционным государством, где приоритетом являются право и конституционная законность. Правовое государство – это также конституционное государство, в котором преобладает конституционализация правовой нормы. Правовое государство – это суверенная политическая организация, основанная на верховенстве закона, в которой гарантируется защита прав и свобод человека.

Ключевые слова – правовое государство, верховенство права, верховенство закона, социально-правовое государство, демократия, социальное государство, права человека.

PROBLEMS OF THE ESTABLISHMENT OF THE JURAL STATE IN THE REPUBLIC OF ARMENIA

Astghik Khurshudyan

Abstract

The problems of the establishment of the jural state are rightly related to constitutional changes that are clearly fixed in the social, economic and legislative foundations of the jural state, since the jural state is a constitutional state where the priority is the law and constitutional legality. The legal state is also a constitutional state in which the constitutionalization of the legal norm prevails. A legal state is a sovereign political organization based on the rule of law, in which the protection of human rights and freedoms is guaranteed.

Key words – constitutional state, the rule of rights, the rule of law, social-constitutional State, democracy, social State, human rights.